

Թէ բանդագուշող մը եւ վտանգաւոր ամբոխաւար մը իւր առջեւն ունէր Ամիրզունայ Քան, ամէն կասկածէ վեր էր: Կը հրամայէ կենդանւոյն աւագան նետել զանիկա եւ ջրախեղդ ընել: Կաթողիկոսին բարեխօսութեամբ միայն կը հանուի Մեխլու կիսահեղձ, պայմանաւ որ հեռանայ պարսկական սահմանէն: Յուլարկաւոր գունդով «վարեցին զնա մինչեւ ի Նիզ գաւառ. եւ զնաց մինչեւ ցԱրզրում. եւ ասէր զնամ յԵրուսաղէմ» ապաշխարելու իւր յիմարութիւնները: Իր ետեւէն կը հասնին ի Կարին Կեղեցի Պօղոս վարդապետին աղաբարարական թղթեր. «եւ նա կալեալ զնա՝ էառ զվեղարն եւ զփիլոնն» (Ձաք. 53): Հասնելով Երուսաղէմ «եւ անդ շատ ոք զանդատէր էին Գրիգոր եպիսկոպոսին յԵրուսաղէմայ. եւ նա ի շղթայս էր եղեալ եւ ի բանդի արկեալ, զի տացէ ի ձեռս պարոնին: Նա ուխտական տօլվաթաւորքն բազում աղաչանօք հաղիւ զերծուցեր էին ի ձեռանէ Գրիգոր եպիսկոպոսին եւ եկեալ էր ի Հալապ»: Անկէ Սաֆար Բաբերդցի բերած է զինքը Ամիրթ. «եւ անտի ի յետ անյայտ եղեւ եւ ոչ ոք զիտաց թէ ո՞ւր զնաց» (Դարանաղցի, 472):

Մեխլու անկեալ ժամանակի տխրոյժ ծնունդն էր: Վիրաւորուած իր անձին զէմ տաժուած արհամարհոտ վերաբերմունքէն, ամբարհաւաճած իւր «ճարտասան» լեզուէն եւ «զիտութենէն», քաջալերուած տգէտ ամբոխին ծափահարութիւններէն, թերեւս նաեւ գայթակղած ժամանակակից արեղաներու